ՀՀ ԳԱԱ ինստիտուտների կողմից 2014թ. կազմակերպվող գիտական միջոցառումների ցանկ

- **2014 թ.-ի մայիսի 12-13-ը** ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում տեղի կունենա ակադեմիկոս Արմեն Ա. Գալոյանի ծննդյան 85-ամյակին նվիրված գիտաժողով

- **2014 թ.-ի հունիսի 26-27-ը** ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը հրավիրում է միջազգային գիտաժողով՝ "Ջրային ռեսուրսների կայուն կառավարում և Ասիական երկրներում լեռնային լճերի էկոհամակարգերի պահպանում" թեմայով: Գիտաժողովը կազմակերպվում է Ասիական երկրների գիտությունների ակադեմիաների ասոցիացիայի և ՀՀ ԳԱԱ-ի համագործակցության շրջանակներում: Նիստերը կկայանան ՀՀ ԳԱԱ Նախագահության նիստերի կլոր դահլիճում

- **2014թ.-ի օգոստոսի 21-ից 26-ը** Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան, ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտը, <<Էկոատոմ>> գիտաարտադրական միավորումը, «ՄԻՖԻ» ազգային հետազոտական միջուկային համալսարանը, Տոմսկի ազգային հետազոտական պետական համալսարանը Երևանում կազմակերպում են <<Հազվագյուտ քիմիական էլեմենտներ՝ արդյունահանում, բաժանում և ժամանակակից նյութեր>> I միջազգային սիմպոզիումը:

- **2014 թ.-ի սեպտեմբերի 12-15-ը** Կիևում (Ուկրաինա) տեղի կունենա "12th EAST-WEST DESIGN & TEST (EWDTS 2014)" սիմպոզիումը

- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը **2014թ.-ի սեպտեմբերի 19-ին** կազմակերպում են գիտաժողով՝ “Գիտական հաշվարկների մարտահրավերները” խորագրով

- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Երևանի պետական համալսարանը **2014 թ.-ի հոկտեմբերի 1-ից 2-ը** կազմակերպում են միջազգային գիտաժողով "Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)" խորագրով

- **2014 թ.-ի հոկտեմբերի 7-9-ին** Բյուրականի աստղադիտարանում տեղի կունենա գիտաժողով «Աստղագիտության կապն այլ գիտությունների, մշակույթի և հասարակության հետ» թեմայով՝ նվիրված գիտության, մշակույթի և մարդկային գործունեության այլ ոլորտներում աստղագիտության դերին և Տիեզերքից

ստացված գիտելիքների միջոցով նշված ոլորտների զարգացմանը

- **2014թ.-ի հոկտեմբերի 7-10-ը** Հայկական քիմիական ընկերությունը, ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի ԳՏ Կենտրոնը և Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարանը կազմակերպում են Հայկական քիմիական ընկերության “Ձեռքբերումներ և խնդիրներ” IV գիտաժողովը (միջազգային մասնակցությամբ), որը անց է կացվելու հոկտեմբերի 7-8-ը Երևանում՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Նախագահության նիստերի դահլիճում (Մարշալ Բաղրամյան պող. 24) և շարունակվելու է հոկտեմբերի 9-10-ը ք. Վանաձորում՝ Հ. Թումանյանի անվ. պետական համալսարանում

- Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Սոցիալ-քաղաքական հետազոտությունների ինստիտուտը, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը և Ժամանակակից սոցիալական գիտությունների բարձրագույն դպրոցը (Մ.Վ. Լոմոնոսովի անվան ՄՊՀ-ի ֆակուլտետ) 2014թ. նոյեմբերի 5-ին Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) և **2014թ. նոյեմբերի 6-7-ը** Երևանում (Հայաստանի Հանրապետություն) "Միգրացիոն կամուրջներ Եվրասիայում" ծրագրի շրջանակներում, անցկացնելու են VI միջազգային գործնական գիտաժողով՝"Միգրացիայի դերը Եվրասիայի ուղարկող և ընդունող երկրների սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական զարգացման գործընթացում. Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններ" խորագրով